

# Խարանի (ստիգմա) սահմանումը եւ խտրականության խնդիրը

## 1. Ի՞նչ է խարանը

Խարանը վերաբերմունքի եւ ընկալումների այն շարքն է, որոնց արդյունքում մարդիկ մերժում, խուսափում կամ վախենում են նրանցից ում իրենք իրենցից տարբեր են համարում: Հայերենով խարանը, որ թարգմանվել է ստիգմա հունարեն եզրույթից, մարդու մարմնի վրա կտրվածքի կամ այրելու միջոցով նշան թողնել է նշանակում: Հին աշխարհում խարազանման միջոցով տարբերակվում էին հանցագործները, ստրուկները կամ դավաճանները:

## 2. Խարանի որ՞ տեսակներն են ազդում հոգեկան առողջության հետ խնդիրներ ունեցողների վրա

Կան երեք հիմնական տիպեր: Դրանք են՝ հանրային, ինստիտուցիոնալ եւ անձնական խարանները:

## 3. Ի՞նչ է հանրային խարանը

«Հանրային խարան»-ը վերաբերվում է հոգեկան առողջության հետ խնդիրներ ունեցողների եւ նրանց ընտանիքի անդամների նկատմամբ հանրային վերաբերմունքին: Օրինակ, կարող է լինել հանրային ընկալում

առ այն, որ հոգեբուժական խնդիրներ ունեցողները հակված են բռնությունների, կամ վտանգավոր են:

#### 4. Ի՞նչ է ինստիտուցիոնալ խարանը

«Ինստիտուցիոնալ խարան» ասելով նկատի են առնվում կազմակերպությունների քաղաքականությունները, կամ դրանցում առկա բացասական վերաբերմունքի եւ համոզմունքների մշակույթը: Օրինակ, բժշկության մեջ հաճախ կարելի է հանդիպել «շիզոֆրենիկ» եզրը: Ընդհանրապես նախընտրելի է օգտագործել «մարդկանց առաջնային լեզվի» համակարգը՝ այս կոնկրետ դեպքում օգտագործելով «շիզոֆրենիայի փուլով անցող մարդ» ձեւակերպումը:

#### 5. Ի՞նչ բան է ինքնախարագանումը

«Ինքնախարագանումը» դրսևորվում է այն դեպքերում, երբ մարդն ընդունում է հասարակության կողմից իրեն վերագրվող թյուր կարծիքը: Նման բացասական ընկալումները անձի կամ խմբի սեփականությունը դառնալուց հետո ամոթի, զայրույթի, անհուսության զգացողություններ են ձեւավորվում: Արդյունքում մարդը կարող է հրաժարվել հանրային աջակցությունից, աշխատանքից, կամ հոգեկան առողջության հնարավոր բուժումներից:

#### 6. Ի՞նչ է խտրականությունը

Եթե խարանը վերաբերմունք, կամ համոզմունք է, ապա խտրականությունը այդ համոզմունքների եւ վերաբերմունքի վարվելակերպային դրսևորումն է: Խտրականությունն ի հայտ է գալիս, երբ անհատները կամ կառույցները անարդարացիորեն զրկում են մարդուն ինքնադրսևվորվելու հնարավորությունից՝ հենվելով խարանի վրա: Խտրականության արդյունքում անհատը կարող է մեկուսացվել հասարակությունից՝ հայտնվելով լուսանցքային վիճակում: Այս իրավիճակը կարող է դրսևորվել քաղաքացիական իրավունքներից, աշխատանքի եւ կրթություն

ստանալու հնարավորությունից, բնակության վայրից, հանրային կյանքին մասնակցելուն զրկվելու ձեւերով:

## 7. Ի՞նչպես է դրսեւորվում խտրականությունը

Խտրականությունը ներառում է հաշմանդամություն ունեցող անհատի նկատմամբ տարբերակված վերաբերմունք ունենալով: Օրինակ, շատ թաղամասերում բնակիչները հաճախ փորձում են կանխել իրենց տարածքում հոգեբուժական խնդիրներ ունեցողների համար կառուցվող տների շինարարությունը: Բողոքի նմանատիպ դրսեւորումները կարող են կանխել տնային պայմաններ ստեղծելու հնարավորությունը: Ավելին՝ 1995 թվականին ԱՄՆ-ում իրականացված հետազոտության համաձայն, երկրի բնակչության ¼-ը աշխատանքից կհեռացներ այն անձանց, ովքեր ի սկզբանե չեն տեղեկացրել հոգեկան առողջության խնդիրների մասին: Նման իրավիճակներն իրենց մեջ խտրականություն են պարունակում:

Խտրականություն կարող է համարվել նաեւ հաշմանդամություն ունեցող անձանց բավարար կենսապայմանների չապահովումը: Օրինակ հոգեբուժական խնդիրներ ունեցող անձանց համար բավարար կենսապայմանների ապահովումը ներառում է շարունակական վերահսկողություն, մասնագիտական աջակցություն, աշխատանքային ֆիզիկական եւ բովանդակային պայմանների փոփոխություն եւ այլն:

Մեզ համար կարեւոր է Ձեր կարծիքը: Փաստերի այս շարքը կարդալուց հետո խնդրում ենք մասնակցել մեր հարցմանը:

Անգլերեն <http://fs12.formsite.com/disabilityrightsca/form54/index.html>

Իսպաներեն <http://fs12.formsite.com/disabilityrightsca/form55/index.html>

*Խարազանելը, խտրականությունը, խտրականության կրճատման եւ հաջող քաղաքականության ծրագիրը (APEDP) ֆինանսավորվում է հարկատուների կողմից հաստատված հոգեկան առողջության ծառայությունների մասին օրենքով եւ կառավարվում Կալիֆորնիայի առողջապահական հարցերով վարչակարգի կողմից (CaIMHSA): CaIMHSA-ը մարզային ավագանիներից բաղկացած կազմակերպություն է, որը գործունեություն է ծավալում հոգեկան առողջության խնդիրներ ունեցողներին, ընտանիքներին եւ համայնքներին աջակցելու ուղղությամբ: Կազմակերպությունը մատուցում է ծառայություններ, ինչպես նաեւ կրթական ծրագրեր է իրականացնում նահանգային, տարածաշրջանային եւ տեղական մակարդակներում: Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել <http://www.calmhsa.org> կայքը:*



WELLNESS • RECOVERY • RESILIENCE